

ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԷՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՆՈՐ ԿԱԼՈՒԱԾԻ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ԵՒ ԽԱՋՔԱՐԵՐՈՒ ՕԾՈՒՄ
Ուրբաթ, Մայիս 8, 2009

Ուրբաթ, Մայիս 8ին, 2009, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեան, ուղեկցութեամբ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցման Աշխատանքներու Վերահսկիչ՝ Հոգշ. Ս. Պարեպ Ծ. Վրդ. Երեցեանի եւ Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեանի, այցելութիւն փուլաւ Լա Գանիապայի եւ Քրէսէնթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ՝ կատարելու համար նոր Եկեղեցւոյ կալուածի Հողի Օրհնութիւնը եւ Խաչքարերու Օծումը:

Երեկոյեան ժամը 8:00ին, խուռներամ հաւատացեալներու ներկայութեան, Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան Բարի Գալուստ մաղթեց Առաջնորդ Սրբապան Հօր, Հայր Պարեպին եւ Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Պրն. Ժոզէֆ Կանիմեանին եւ ներկայ գրնուող հաւատացեալներուն: Տէրունական աղօթքով սկսաւ Հողի Օրհնութեան արարողութիւնը եւ երեք Խաչքարերուն Օծումը: Խաչքարերու նուիրարութեան են՝ Տէր եւ Տիկին Վահան եւ Մելինէ Ալապարեան, Տէր եւ Տիկին Արմէն եւ Ռիթա Պարանեան եւ Տիկին Հերմինէ Թաշճեան: Տէր Հայրը ջուրով եւ գինիով լուաց խաչքարերը, ապա Սրբապան Հայրը Սուրբ Միւռնոնով Օծեց: Այս խաչքարերը պիտի վերադառնան նոր Եկեղեցւոյ պատերուն մէջ:

Սրբապան Հայրը իր խօսքին մէջ ըսաւ.՝

«Այս օրը Լա Քրէսէնթայի, Լա Գանիապայի եւ Թահանկայի համայնքներուն եւ մեր ժողովուրդի կեանքին մէջ պատմական օր պիտի մնայ: Ինչպէս մեր միւս բոլոր Եկեղեցիներու հողի օրհնութեան, հողի սրբագործման արարողութեան օրուան հետ կապուած լուսանկարները երբ տարիներ յետոյ դուրս կը բերենք արխիւներու մէջէն, այնպէս կը տեսնենք մանուկներու, փոքրիկներու, պատանիներու նկարները, որոնք տասնեակ-տասնեակ տարիներ յետոյ գաղութի մեծերը եւ ղեկավար առաջնորդները դարձած են, այս փոքրիկներուն ուրախութիւնը, որ աւելի խանդավառ կերպով պիտի արտայայտուի, մենք արդէն իսկ այժմէն գալիք տասնամեակներու իրենց ապրելիք ուրախութիւնը ապահոված ենք:

Եկեղեցւոյ կառոյցին չափը չէ, որ մեր մէջ կ'աւելցնէ հաւատքին չափը: Հաւատքին չափով է, որ մենք փոքրին մէջ մեծը կը տեսնենք: Հաւատքի չափով է, որ մենք կը պահանջ, որ այսպէս, այս փոքր տարածքին մէջ, այս փոքր հողին վրայ ինչ գեղեցիկ ընտանիքներ պիտի կառուցուին, որոնք ուխտ պիտի կատարեն վաղը, միւս օր Սուրբ Սեղանին առջեւ ընտանիք կազմելու համար եւ այս փոքր Եկեղեցւոյ մէջ պիտի մեծնայ թիւը մանուկներու, որոնք Սուրբ Մկրտութեան պիտի արժանանան եւ Սրբալոյս Միւռնոնով պիտի դրոշմուին»:

Ապա Սրբապան Հայրը գնահատեց Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեանի եւ Ծիսական Խորհուրդի անդամներուն՝ Արեւնապետութեամբ Տիար Վահան Ալապարեանի ժրաջան աշխատանքը եւ յոյս յայտնեց, որ մօտ ապագային Ծուխը ո՛չ միայն նիւթապէս պիտի պորանայ եւ շուրափոյց կերպով պիտի այրէ իր պարտամուրհակը, այլ այս փոքրիկ նորակառոյց Եկեղեցւոյ միջոցաւ լայն գործունէութիւն պիտի ծաւալէ Լա Գանիապայի եւ Քրէսէնթա Հովիտի աւելի քան 25,000 հայութեան հոգեւոր կարիքները հոգալու համար:

Ներկայ էին Ծուխի հիմնադիրներէն եւ առաջին Արեւնապետ՝ Տէր եւ Տիկին Խաչիկ եւ Ռոպմէրի Ճանոյեան: Այս արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին՝ Տէր Հօր Օգնական, Բրշ. Ռապմիկ Սրկ. Սարգիսեան, Բրշ. Սրեփան Սրկ. Մարիքեան, Կիսասարկաւագ Կերի Սարաֆեան եւ դպիրներ, ինչպէս նաեւ Ծուխին Երգչախումբը՝

ղեկավարութեամբ Պրն. Պօղոս Յովհաննիսեանի եւ Երզնէնահար Տիկին Ժաննա Յովհաննիսեանի:

Շինարարական որոշ աշխատանքներ կատարելէ յետոյ, Յունիսի սկիզբին Սուրբ Պատարագները պիտի մատուցուին այս փոքրիկ Եկեղեցւոյ կամարներուն ներքեւ:

«Մենք հոս ենք, եկէ՛ք մոմ մը վառենք՝ մեր Աղօթքի Տունը լուսաւորելու համար»:

«Մենք հոս ենք, եկէ՛ք քար մըն ալ մենք աւելցնենք Եկեղեցւոյ կառոյցին համար»:

Արարողութեան աւարտին ի պատիւ Սրբազան Հօր, Տէր եւ Տիկին Տոբթ. Սիմոն եւ Լենա Սիմոնեան, Ծխական Խորհուրդի եւ Տիկնանց Միութեան անդամներու աջակցութեամբ, կազմակերպած էին հիւրասիրութիւն մը իրենց ջերմ յարկէն ներս: